

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

#### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի և Մարտին Սարգսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կենդանական աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. «Կենդանական աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածը, որով կարգավորվում են ինչպես վայրի կենդանիների, այնպես էլ կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների արտահանման համար թույլտվություններ ստանալու կապված հարաբերությունները, ապահովում է <<Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին>> կոնվենցիայի (CITES) պահանջի կատարումը (Կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 2008 թվականին):

Նշված կոնվենցիայի կողմ հանդիսացող երկրների համար վայրի կենդանիներ, կենդանաբանական հավաքածուներ կամ առանձին նմուշներ ներմուծելու դեպքում դրանց արտահանման թույլտվությունների առկայությունը հանդիսանում է պարտադիր պայման:

2. Օրենքի 21-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ ամրագրված է կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների արտահանման համար թույլտվություններ տալու պահանջը, և օրենքով կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների օգտագործման համար լիցենզիա տալու պահանջ չի սահմանված: Այսպիսով ստացվում է որ, ներկայացված օրենքի նախագծի ընդունման դեպքում կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների տնօրինողները թե օգտագործման, և թե արտահանման համար որևէ իրավական փաստաթուղթ կարող են չունենալ, ի հակադրումն գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողների:

3. Ինչ վերաբերում է ներկայացված նախագծի հիմնավորմանը, ապա`

1) օրենքի 23-րդ հոդվածով ամրագրված կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման բազմաթիվ տեսակներից միայն գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման համար է պահանջվում լիցենզիա (օրենքի 24-րդ հոդված), իսկ մյուս դեպքերում` սոցիալական, բնապահպանական, գեղագիտական, գիտահետազոտական և կրթական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման համար լիցենզիա չի պահանջվում, ուստի օրենքի 21-րդ հոդվածը կրկին լիցենզիա ստանալու պահանջ չի առաջացնում, ինչպես նշված է ներկայացված նախագծի հիմնավորման մեջ:

2) պետք է նշել, որ գործարարների համար ժամանակի կորստի նվազեցման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի N 1174-Ն որոշման հավելվածի 5-րդ կետում` Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 10-ի N 1186-Ն որոշմամբ կատարվել է համապատասխան փոփոխություն` կրճատելով վերարտադրված կամ բուծված ձկների արտահանման թույլտվության տրամադրման ժամկետը: Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշմամբ անագատ պայմաններում բուծած թառափազգիների արտահանման թույլտվությունների տրամադրումն իրականացվում է

պարզեցված ընթացակարգով և զգալի կրճատված ժամկետներում:

Ելնելով նշվածից՝ առաջարկում ենք ներկայացված օրենքի կարգավորման խնդրի լուծումը գտնել ոչ թե արտահանման թույլտվությունների տրամադրման բացառման, այլ այդ գործընթացի պարզեցման ընթացակարգերի սահմանման միջոցով, քանի որ կենդանական աշխարհի (կենդանիների վայրի տեսակների) արտահանումը երկրից պետք է իրականացվի բացառապես պետական լիազորված մարմնի կողմից տրամադրված թույլտվության առկայության դեպքում՝ որպես պետության բացառիկ սեփականություն հանդիսացող ազգային հարստության և կենդանական զենեոիկական ռեսուրսների պահպանության ու օգտագործման վերահսկելիության մեխանիզմ: Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս. Պապյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-1005-25.10.2010-ԳԲ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Կենդանական աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություն կատարելու մասին**

**Հողված 1.** «Կենդանական աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2000 թվականի ապրիլի 3-ին ՀՕ- 52 օրենքի 21-րդ հոդվածից եւ հոդվածի վերնագրից հանել «արտահանումը բառերը:

**Հողված 2.** Մույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

## **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

### **«Կենդանական աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Կենդանական աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվում է, որ վայրի կենդանիների արտահանումը, ներմուծումը ու դրանց պահումը անազատ պայմաններում կամ վերաբնակեցումը ազատ պայմաններում իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ: Ընդ որում, նույն կենդանու ձեռքբերման բոլոր տեսակները արդեն իսկ ենթադրում է համապատասխան լիցենզիայի առկայություն (որս, հավաք, մթերում եւ այլն): Արտահանման համար կրկին լիցենզիա ունենալու պահանջը անհիմն բարդություններ եւ ժամանակի կորուստներ են պատճառում ինչպես գործարարների, այնպես էլ մասնավոր անձանց համար: Կարգավորման խնդիր է հանդիսանում արտահանման թույլտվությունների ազատականացումը, գործարար միջավայրի բարելավումը: